

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՂԷՍԻ ԼՁ. ՀԱՏՈՐԻՆ ՇՆՈՐՀԱՆԴԷՍԸ ԳԻՒՄՐԻԻ...

Շաբաթ, 24 Սեպտեմբեր 2016ի երեկոյեան, Գիւմրիի Արաքս Պանդոկի սրահին մէջ տեղի ունեցաւ Հայկազեան Հայագիտական Հանդէսի ԼՁ. Հատորին շնորհանդէսը՝ Շիրակի Հայագիտական Կեդրոնի կազմակերպած գիտաժողովի ծիրին մէջ, ներկայութեամբ մեծաթիւ հայագէտներու, մտաւորականներու եւ բարեկամներու:

Արդարեւ, եռամեայ դրութեամբ կայացող «Շիրակի Պատմամշակութային Ժառանգութիւնը. Հայագիտութեան Արդի Հիմնահարցեր» վերնագրեալ 9րդ միջազգային երկօրեայ գիտաժողովին տարբեր երկիրներէ ժամանած աւելի քան հարիւր մասնակից մասնագէտներու ներկայութեան, Շաբաթ երեկոյեան - առաջին օրուան նիստերուն աւարտին - տեղի ունեցաւ Հայկազեան Հայագիտական Հանդէսի 36րդ հատորին շնորհանդէսը:

Հանդիսութեան բացումը կատարեց Շիրակ Հայագիտական Կեդրոնի տնօրէն Դոկտ. Սերգօ Հայրապետեան, աշխուժ եւ կազմակերպող հայագէտ մը, որուն յղացումն էին վերոյիշեալ ինն գիտաժողովները: Հայրապետեան ողջունեց հատորին շնորհանդէսին կայացումը Գիւմրիի մէջ, Հանդէսը նկատեց «հայագիտական իւրատեսակ շտեմարան», նշելով որ ան «մէկ ազգ մէկ մշակոյթ կարգախօսի իրականացման լաւագոյն օրինակներից մէկն է մեզանում»: Ան իր խօսքը փակելով շեշտեց. «Սիրելի Հայկազեան Հայագիտական Հանդէս, քո գիտական բարձր վարկանիշով, վարակիչ հայրենասիրութեամբդ, հայ մշակոյթի նկատմամբ քո ակնածալից վերաբերմունքով, կոչմանդ ու նուիրումիդ վեհ գիտակցմամբ դու արժանիօրէն վայելում ես հայ, եւ ոչ միայն, ընթերցողիդ սէրն ու բարձր գնահատանքը: Շնորհաւոր քո նոր՝ 36րդ հատորի ծնունդը...»:

Ապա խօսք առաւ Հանդէսի աշխատակից, Կեդրոնի աւագ գիտաշխատող Դոկտ. Կարինէ Ալեքսանեան, որ տարիներէ ի վեր ժրաջան աշխատակիցն է նաեւ Հանդէսին: Ալեքսանեան լուսարձակի տակ առաւ 36րդ հատորին խմբագրականը, որ «յստակ, արհեստականութիւնից զերծ եւ գիտականօրէն սահմանում է հայագիտութեան վերջին 25 տարիների նուաճումներն ու մարտահրաւերները՝ համարելով այն անհրաժեշտութիւն ՀՀ անկախութեան 25րդ տարուայ հանգրուանին հասնելուց յետոյ: Աւելին, Հանդէսը նոր էջ է նշանաւորում հայագիտութեան զարգացման մէջ՝ ազդարարելով պետականագիտութեան, հայութեան ինքնորոշման իրաւունքի եւ համաշխարհային նման իրավիճակների համեմատական

ուսումնասիրութիւնների, ցեղասպանագիտութեան, սփիւռքագիտութեան եւ ընդհանրապէս հայոց հին ու նոր խնդիրների գիտական խորքային ուսումնասիրութիւնների անհրաժեշտութեան մասին»:

Ալեքսանեան շեշտեց թէ *Հանդէսը* «ոչ միայն յստակեցնում է հայագիտութեան խնդիրները, այլ որ ամենակարեւորն է՝ գործնականօրէն հետեւում դրանց իրականացմանը: Խօսքը վերաբերում է նաեւ հայագէտների նոր սերնդի աճեցմանը, հայ մասնագէտների շփումներին... *Հանդէսը* հայագիտութեան մասնագէտների միջեւ համագործակցութեան նոր հարթակներ է ստեղծել, կոչել հայ կեանքը տնօրինող գործիչներին՝ գիտակցել հայագիտութեան ռազմավարական նշանակութիւնը, որդեգրել հայագիտութեան սատարման քաղաքականութեան մշակման գործը...: *Հանդէսը*՝ մատը զարկերակին դրած, մշտապէս արծազանգել է հայոց կեանքի կարեւոր իրադարձութիւններին»:

Ապա Ալեքսանեան համառօտակի ներկայացուց հատորը, եզրակացնելով, թէ «հատորը հաւատարիմ է մնացել հայագիտութեան կարեւոր ճիւղերի՝ ցեղասպանագիտութեան եւ սփիւռքագիտութեան ուսումնասիրութիւնները խրախուսելուն... 36րդ հատորը, կարեւոր խնդիր համարելով նիւթերի գիտականութեան ապահովումը, ճանաչողական, տեղեկատուական դրոյթներից վերլուծական, գիտական դրոյթների անցնելու անհրաժեշտութիւնը, համապարփակ մօտեցումը նիւթերին, որոշակի տեղ է յատկացրել այժմեական տեսակէտից նախկին խնդիրների քննարկմանը նուիրուած հետազօտութիւններին: Պատահական չէ, որ վերջին 25 տարիների հայագիտութեան նուաճումների մէջ որոշակի է հենց *Հայկազեան Հայագիտական Հանդէսի* դերը, որի՝ ընթերցողի սեղանին դրուած 36րդ հատորը մի կարեւոր փորձ է յաղթահարելու հայագիտութեան մարտահրաւերները եւ իրատեսակ փորձաքար՝ տեսնելու հայագիտութեան նուաճումները»:

Գիւմրիի քաղաքային լարային հնգեակը, խմբավարութեամբ Գիւմրիի սիմֆոնիք նուագախումբի խմբավար Երուանդ Վարոսեանի, մեկնաբանեց կոմիտասեան նուագներ, ապա խումբին միացած երիտասարդ երգչուհին ընկերակցութեամբ կատարեց կոմիտասեան «Կանչիր Կռունկ»ը:

Իր խօսքին մէջ, *Հանդէսի* պատասխանատու քարտուղար Դոկտ. Անդրանիկ Տագէսեան ականարկելով սրահին մէջ գտնուող *Հանդէսի* շուրջ տաս աշխատակիցներու ներկայութեան, ընդգծեց գործակցութեան արդիւնաւէտութիւնը եւ շեշտեց որ «միասին մենք աւելի զօրաւոր ենք», իբրեւ փաստ մատնանշելով հատորը եւ նոյնինքն գիտաժողովը:

Երգային կատարումէն ետք Հայկազեան Համալսարանի նախագահ Վեր. Դոկտ. Փոլ Հայտոսեան հանգամանօրէն անդրադարձաւ

Հայկազեան Համալսարանի առաքելության, կատարած հայագիտական աշխատանքին ու ծաւալած կրթական գործունէութեան:

Ողջոյնի ու գնահատանքի ինքնաբոլս խօսքեր ըսին ՀՀ ԳԱԱ Պատմութեան Բաժանմունքի տնօրէն ակադեմիկոս Աշոտ Մելքոնեան, գրականագէտ Դոկտ. Դաւիթ Գասպարեան, Ճարտարապետութեան Ազգային Թանգարան Հիմնարկի հիմնադիր Դոկտ. Աշոտ Գրիգորեան, Խաչատուր Աբովեանի Անուան Մանկավարժական Համալսարանի Հայոց Լեզուի Ամբիոնի վարիչ Դոկտ. Լալիկ Խաչատրեան:

Շնորհանդէսը առիթ եղաւ նոր շփումներու՝ մանաւանդ Գիւմրիի եւ Վանաձորի հայագիտական շրջանակներուն հետ, նաեւ խորացնելու գործակցութիւնը գիտաժողովին մասնակցող հայագէտներուն հետ՝ յօգուտ հայագիտութեան առաւել զարգացման:

ԵՒ... ՊԷՅՐՈՒԹԻ ՄԷՋ

Հինգշաբթի 6 Հոկտեմբեր 2016ի երեկոյեան ժամը 7ին, Հայկազեան Համալսարանի դահլիճին մէջ տեղի ունեցաւ *Հայկազեան Հայագիտական Հանդէսի* 36րդ հատորին շնորհանդէսը, լիբանահայ մտաւորական խաւի ներկայացուցիչներու եւ կրթական գործիչներու ներկայութեամբ:

Բացման խօսքը կատարեց *Հանդէսի* պատասխանատու քարտուղար Դոկտ. Անդրանիկ Տազէսեան, որ սահիկներով ներկայացուց Գիւմրիի մէջ տեղի ունեցած «Շիրակ» հայագիտական համագումարն ու անոր ծիրէն ներս կատարուած սոյն հատորի շնորհանդէսը:

Օրուան բանախօսն էր Լիբանանի մէջ Հայաստանի Հանրապետութեան դեսպան Պրն. Սամուէլ Մկրտչեան, որ իր գոհունակութիւնը յայտնեց նմանատիպ հրատարակութեան մը իտես, կարելորելով *Հանդէսին* բովանդակութեան միջանի յատկանիշերը, ինչպէս՝ նիւթերու համընդգրկունութիւնը, հայագիտութեան հանդէպ համապարփակ մօտեցումը եւն.: Պրն. դեսպանը հայագիտութիւնը նկատեց հայ ժողովուրդի ստեղծած մնայուն արժէքներէն մին. ան շեշտեց որ հայագիտութիւնը պէտք է կարենայ դիմագրաւել արդի պայմաններու բերումով յառաջացող զանազան նոր մարտահրաւերներն ու այժմէական խնդիրները, կարելորեց հայահոծ համայնքներ ունեցող երկիրներու համալսարաններուն մէջ հայագիտական ամբիոններու ստեղծումը, նշելով որ հայագիտութիւնը միայն հայութեամբ ու Հայաստանով չի սահմանափակուիր, այլեւ կ'ընդգրկէ նաեւ շրջակայ երկիրներու քաղաքական ու քաղաքակրթական պատմութիւնը: Երրորդ խնդիրը որուն վրայ կեդրոնացաւ բանախօսը, հայագիր հայագիտական երկերու թարգմանութեան անհրաժեշտութիւնն էր, առանց որուն, ստեղծուած

երկերն ու կատարուած ուսումնասիրութիւնները անհասանելի կը մնան օտարներուն, իսկ հայագիտութեան ազդեցութեան շրջանակը՝ խիստ կը նեղնայ: Հուսկ, Պրն. դեսպանը շնորհակալութիւն յայտնեց *Հանդէսի* խմբագիրներուն, անոնց մաղթելով յարատեւութիւն:

Հայկազեան Հայագիտական Հանդէսի վաստակաւոր խմբագիր Անդրանիկ Ծ. Վրդ. Կռանեան, ողջունեց ներկաները, շնորհակալութիւն յայտնեց աշխատակիցներուն, որոնց շնորհիւ նաեւ սոյն *Հանդէսը* կը հրատարակուի առանց թափի ջլատումի եւ որակի նուազումի: Հայ ժողովուրդին մշակութաստեղծ յատկութիւնը, ինչպէս եւ սոյն հատորին հրատարակութիւնը, ըստ վարդապետին, արգասիքն են այն իրականութեան, որ «մարդ էակին կեանքը կը կանգնի հաւատքի եւ համոզումներու վրայ: Մարդիկ կը ստեղծեն այն, ինչին կը հաւատան. իսկ բանի մը հաւատալու լաւագոյն ձեւը՝ զայն ապրիլն է», նկատեց հայր Անդրանիկ, յիշեցնելով որ հայագիտութիւնը նաեւ պէտք է ըլլայ կեանքի մաս:

Փակման խօսքին մէջ, Հայկազեան Համալսարանի նախագահ վերապատուելի Դոկտ. Փոլ Հայտոսեան յայտնեց թէ սոյն շնորհանդէսները գերագոյն երանութիւն կը պարգեւեն, որովհետեւ *Հանդէսը* Համալսարանին պատուաբեր մէկ ձեռքբերումն է: Անդրադառնալով անելի լայն ոլորտի՝ վերապատուելին ցաւով յիշեց թէ ազգային կեանքի ամէն նահանջ բացասաբար կ'ազդէ հայագիտութեան վրայ եւ Հալէպի մէջ թէ այլուր մղուած ճակատագրական զանազան պայքարները նաեւ իրենց բացասական հետեանքը կ'ունենան հայագիտական մտքի արգասաւորութեան վրայ: Բարեբախտաբար սակայն, նշեց համալսարանի նախագահը, հայագիտութեան մարզին մէջ նկատուող գործակցութիւններն ու ամրապնդուող կապերը դրական լիցք կը հաղորդեն գիտութեան այդ ճիւղին, որուն վկայութիւնն են երիտասարդ հայագէտներու եւ հայագիտութեան ուսանողներու առկայութիւնը, որոնցմէ յոյլ մը կ'ուսանի նաեւ Հայկազեանէն ներս: Ան կոչ ուղղեց հայագիտութեան կենսունակութիւնը երաշխաւորող բոլոր գաղութներուն, համայնքներուն եւ հաստատութիւններուն, որ յանձնառու մօտեցումով ջանք չխնայեն ապահովելու հայագիտական բարձր որակ, միաժամանակ գնահատեն հայագիտական ամէն աշխատանք:

Լիբանանի հայոց թեմի առաջնորդ Շահէ Եպս. Փանոսեան իր կարգին, շնորհաւորեց *Հանդէսի* հրատարակութիւնը, կարեւորելով Հայկազեան Համալսարանին անփոխարինելի դերը լիբանահայութեան կեանքին մէջ:

Շնորհանդէսի աւարտին, բակին մէջ, խմբագրական կազմի անդամներն ու բանախօսները հատեցին օրուան կարկանդակը: